

ՀԱՅ ՕՐԱԳՐԱՅ ԼԵԶՈՒՆ

(Թղթակցութիւն)



Արգոյ խմբագիր Բազմավիպի

Երեկ ինչ եկա ծանօթներէս մին, բըռնած ի ձեռին մի օրագիր. քրանած էր, և սաստիկ յոգնած կը թուէր:

— Ի՞նչ ունիս, հարցի:

— Շնչառպառ եղայ, պատասխանեց:

— Ի՞նչ ըրիր:

— Կը կարդայի Արձագանգի 42 թիւը. ուզելով անոր միջէն մի բան հասկանալ, հայերէն բառագիրք չմնաց՝ որ յիստենամ. հինգ ժամ աշխատեցայ, և ոչ մին չգտի այն անհամար բառերէն որք առդ ընդ մէջ կը հանդիպէին ինձ: Մեր օրագիրք անոր համար կը գրեն՝ որ ընթերցողըս ոչ մի բան չհասկանանք. մեզ ծանօթ լեզուա ինչո՞ւ չեն խօսիր. ուսկի՞ց կը գտնեն այդ չստուած հայերէն բառերը:

— Եղբայր, արդո՞ք հայերէն բառեր չեն, այլ օտար լեզուաց. դու հայ գրերէն խաբուեր ես: Մեր այժմեան ուսումնականք, կամ լաւ ևս զրազեւք, ընդհանրապէս երկու դասի կը բաժանուին. մին՝ որ մեծագոյն մասն է, հայերէն չգիտեր. իսկ միւսն չուզելով օգտանալ հայերէնը, փոփոխակի անհասկանալի կը լինին միմեանց. այս է պատճառ մեր գաղափարաց տարաձայնութեան: Թէպէտեւ այդ չհասկանալն ունի այս լատութիւնը՝ որ չենք իմանար մեր օրագրաց ոմանց յայտնած կարգ մի գաղափարները, որք ամենայն արժանաւորութիւն ունին չհասկանալի լեզուա մի գրութեւ. յոյս առաջին մրցանակը կրնան շահիլ Հայրենիքի յայտնածներն ամուսնութեան խորհրդոյն նկատմամբ: Բայց թողունք այս միջանկեալ խօսքը, և գանք քեզ անծանօթ բառից մեկնութեան:

Եւ ես սկսայ պարզել իրեն անոնց իմաստը:

սը: Եր ինչորէի՝ այս բառերը իրենց մեկնութեամբ հանդերձ գնել Բազմավիպի մէջ, որ կրնայ ուրիշ շատերուն՝ և թերեւ նոյն իսկ զրոգաց՝ հասկացողութեան զիւրութիւն ընծայել. և կը ջանամ ուրիշ թերթերէ ևս քաղել և ղրկել:

Միտոր — տէր

Միտորիս — տիկին

Միտինդ — ժողով

Դօկտօր — բժիշկ, ուսուցչապետ

Գիմնազիոն — վարժարան, կրթարան

Բանկ — գրամատուռ

Դիւիդէնա — շահաբաժին

Ֆէլիէտօն — թերթօն

Պարլամէնտ — երեսփոխանաց ժողով

Ռէֆօրմ — նորոգութիւն, բարեկարգում

Պրօֆեսօր — ուսուցիչ [Թիւն

Մայօր — զօրապետ, հրամանատար զօրաց

Լօրդ — իշխան

Սալօն — զահլիճ, սրահ

Հերոսական — զիւցազնական

Հերոսութիւն — զիւցազնութիւն

Բէպէրաուար — ցուցակ

Պիես — թատերախաղ

Ֆիդիքական — բնական

Ֆիդիքական — բնութեամբ

Փոստա — նամակատուռ

Մօնիթօր — տէր, եպիսկոպոս

Միսիօնար — քարոզիչ

Փէշքէշ — նուր

Դարդ — վիշտ

Ֆրանստիկոսութիւն — մոլեաանդութիւն

Տէօրիա — անսովիւն

Ասկէս — ճգնաւոր, միանձն

Բօման — վէպ

Էպիգրաֆ — վերնադիր

Վիտյինա — ապուխտ

Կայսրաշախմատ — երջրկախմատ

Ինտերիեր — լուսամիտ, հանճարեղ

Քարվան — կարաւան

Պրոկուրոր — գործակալ, փոխանորդ

Ալբոմ — տետր, յիշատակարան

Ֆեդմարալ — սպարապետ

Օրդան — զործի, զործարան

Օպերացիա — վերահատուծին

Մեթոդ — ոճ, եղանակ

Մասսամ — ճմլումի

Մասսամիտ — ճմլի

Լիտոգրաֆիա — վիճագրություն

Չանց կ'ընենք յիշել դեռ ուրիշ քանի մի բառեր... Բայց զանց չենք ընել յիշել նա և խանգարուած յատուկ անուններէն զմանն՝ օրինակի համար. Թիֆլիզ, Ստեֆըն, Ֆրանցիս, Սօֆիա, Կլեմենտիոս, Օգոստոս և այլն, փոխանակ գրելու Տփղիս, Ստեփան, Փրանկիսկոս, Սոփիա, Կղեմէս, Օքսենտ կամ Ալեքսենտ :

Տեսնելով մի երկթուղթ օրագիր, որոյ մէջ այդպիսի օտար բառից և օտարաձև առուանց իւրաքանչիւրն չորսէն մինչև տասն անգամ կրկնուած լինի, կարելի է այնուհետև այդ թերթը հայերէն համարել, կամ իւր կազմութիւնը տարբեր իւր Արձագանք անուան կազմութենէն :

Լեզուին հայերէն մնացորդին վերայ խօսելով, հարկ է խոստովանիլ թէ ընտիր կը տորներ պակաս չեն : Բայց պակաս չեն նաև « մարտաբար գնացող Թիֆլիզից դուրս է գալիս » խօսքին նման բացատրութիւններ, զորս չեն կարող լսել առանց ծիծաղելու, — ի հարկէ գնացողին հայերէն նշանակութիւնը նկատելով. — և դու ձեռքդ կ'առնուս Հայկազեան բառագիրքը, տեսնելով թէ արդեօք այդ բառն ունի մի ուրիշ իմաստ՝ որուն ան տեղեակ լինիս. վեց տարի կ'աշխատիս՝ առանց մի նոր բան իմանալու. և վերջապէս կը ստիպուիս զայն ցարժածողին գիմել. և այն ժամանակ կ'իմանաս՝ թէ շոգեկանաքի իմաստով է գործածուած այն :

Սակայն լուր և յուրի միասին մոռանալ կու տայ քեզ « ապրանքա-մարդատար գը-

նացք » խօսքն : Ընթերցող, շուտիւրու պէտք չկայ. տես թէ ինչպէս կազմուած է այդ : Խօսեցանք գնացք բառին վերայ. իսկ ապրանքա-մարդատարն բարդուած է երեք բառերէ, ապրանք, մարդ և տար :

— Բայց ինչպէս ապրանքը կրցեր է իւր յոգնականացուցիչ ք գրով հանդերձ բարդուիլ. ես այդ բանը հայերենի մէջ չեմ տեսած. փաստաւոր կ'ըսենք՝ և ոչ փաստաւոր :

— Ապրանքը զարտուղութիւն կազմեր է հոս. դու զարտուղորդիս բառը չե՞ս կարդացած քերականութեան մէջ : Այս կերպով շինուած է առաստայ օրագրաց մէջ հազար անգամ տեսնուած « վանքապատկան կալուածներ » խօսքն այլ. յորում նոյնպէս զարտուղութեամբ կազմուած է վանքապատկան բառն՝ թէ ըստ բարդութեան և թէ ըստ իմաստին. արդի սովորութիւնն է՝ ընդհանրապէս զարտուղութեամբ խօսիլ, և հազիւ երբեք կանոնով, մանաւանդ ուսանայ մամուլին մէջ :

— Ապրանքէն վերջ եկող ա յօդակապին ջրիի գծիկն (—) այլ զարտուղութեան է :

— Եւրոպացուց յօդակապն է այդ :

— Հայ յօդակապը բաւական չէ՞ր. ինչ բան պակաս է մեծագործ, քարայէն և այլ բառից մէջ :

— Եւրոպացուցն այլ դրեր են՝ որ կապուած բառերը քնաւ չբաղկին... գիշերը ինչպէս քուն լինին, եթէ հայերենի մէջ յիստենեն եւրոպական գէթ մի գծիկ, կամ գիր, կամ բառ, և կամ ամբողջ մի խօսք :

— Կ'աղաչեմ, քննութիւնը յառաջ տար :

— Յետոյ կցեր են մարդ, որով եղեր է ապրանքատարդ. ապա տար՝ որ է...

— Սոսկալի՛ է... ապրանքատարդ տառ... նոյ... զմարդ ապրանք համարելով՝ գերեզմանաւորեան ժամանակները նորոգել կ'ուզեն. այդ անհանդուրժելի է...

— Անիկ ընթերցող, մի բարկանար. այդ բառն ուղիղ մտքը բնուած կը թուի, և պէտք է հասկանալ՝ « ապրանք և մարդ տառով » :

— Ինչպէս երբ աշխատարդ կ'ըսենք, այժ և մարդ տառնձին կ'իմանանք, թէ երկուքէն մի խանութդ. ահա այդպէս է ապրանքատարդն այլ :

— Յիրաւի սխալ է այդ բոտ կազմու-
թեան, բայց այժմ այդպիսի սխալներ կը
լինին՝ ցուցնելու համար դարուս զերապոյն
սղատութիւնը գրչի և գաղափարաց մէջ:

— Եւ միթէ մայրենի լեզուիս մէջ
սպրդած այդ զեղծմանց գէմ բողոքելու իրա-
ւունք չունինք:

— Ուր կ'ուզես՝ բողոքէ՛. այլ պիտի տես.

նես որ Արձագանգն այսուհետեւ նոյն օտա-
րաբանութիւնքը և վրիպակները պիտի շարու-
նակէ անվրդով սրտիւ, սկսեալ իւր անուան
սխալագորութենէն...

— Եթէ ճշմարտասիրութեան ոգւով ուղղէ
պաննք:

— Տեսնենք:

Հացոռնի

Կ Ա Ր Ե Ն Ա Ս Ա Ռ

Ոչ միայն կողմն է այժն կու տան մարդուս
համեղ և կազմութիւն կաթն, այլ նաև ծառերն
որոնք կ'աճին հոն ուր բնութեան հեղինակը
չէ դրած կաթնտու անասուններու ֆէ և մեր
բնիկ գաւառաց մէջ կը տեսնեմք կաթնածոր
բոյսեր՝ ինչպէս եղին և ուրիշ շատ տեսակ
խոտեր, բայց ասոնց կաթն բողոքովին փնա-
սակարէ և բնաւ օգուտ մը չունին:

Օգտակարքն փնտռենք Նոր Աշխարհի մէջ,
ուր բնապատումը գտած են հինգ տեսակ
կաթնարբեր ծառեր, որոնց կաթը ամենեւին
չի նմանիր եղինի և վայրենի բուսոց կաթին,
այլ մեր սովորական խմած կովու կաթին ա-
մենայն յատկութեամբ: Այս հինգ կաթնարբեր
ծառոց մէջ ամենէն նշանաւորն է Կաթնածառն
(galactodendron), ընտիր ծառ մ'է հա-
ցապատեցոց ցեղէն, կը բարձրանայ 15-30
մետր. իւր կեղևն հազիւ թէ քիչ մը կտրեմք՝
ահա անդէն առատութեամբ կը հոսեցնէ իւր
կաթը, զոր բնակիչք ամենայն ախորժով կը
խմեն. համով է կազդուրիչ և յոյժ սնուն-
դարար, միայն քիչ մը կաշտեն է և բոյսի
համ ունի: Սոյն կաթը օդ տեսնած ատեն՝
վրան դեղին մաշկ մի կը կապէ՝ ուսկից բնա-
կիչք պանիր կը շինեն: Առատեան մօտ կա-
նածառի հիւթը շատ առատ կ'ըլլայ, ուստի և
խրաքանչիւր ընտանիք սեփականած է իրեն
մի մի կաթնածառ: Արեւու ծագելէն առաջ
կու գան անոնց տակը և հազիւ թէ բողոքովին
կը լուսնայ կը կտրեն կաթնածառի կեղևը,
ծառը կը հոսէ իւր կաթը և բնակիչք նախ կը
խմեն մինչև որ յազնան, յետոյ սափորներն
լեցնելով տուն կը դառնան և մինչև անգամ
իրենց որորանի մանուկն այս կաթով կը
մեծցնեն:

Բուսանբոյ վերլուծելով սոյն կաթը՝ գտած

է որ բաղադրութեան նիւթերը կովու կաթէն
շատ աւելի են, Օչոյ ազդեցութեամբ շուտով
կ'այլայլի, կը բովանդակէ պարարտ նիւթ մի
նման մեղրամոմի, ուսկից ընտիր մոմ կը շի-
նեն. բաց աստի՛ մէջը կը գտնուի ոչ բորա-
կածնեալ (non azoté) նիւթ՝ նման բնապան-
րոյ. չաքարային՝ որ կը բաղկանայ չաքարէ
և առնձգական խիժէ և դիրաւ կը փոխարկի 'ի
չաքար: Հուսկ ուրեմն սոյն կաթը շատ կը
նմանի կովու կաթին, վասն զի ինչպէս վերջ-
նոյս կաթին բաղադրութեան նիւթերն են
լուր, չաքարեղէն գոյացութիւնք, կողի,
պանրածին և տեսակ տեսակ աղեր, այսպէս
սոյն կաթը այն ամեն նիւթերը կը բովան-
դակէ իւր մէջը և եռապատիկ քանակաւ,
որով կրնանք ալ ըսել, թէ աւելի սերի կը
նմանի քան թէ կաթի:

Ըստ Բուսանբոյի վերլուծութեան ղեւեմք
հոս այս կաթին մէջ գտնուած իւրաքանչիւր
տարերց չափը.

Մեղրամոմ և պարարտ նիւթք	84.10
Շաքար	3.40
Խիժ	3.15
Պանրածին և սպիտ	4.
Նիւթք ոչ բորականեալք	4.25
Մոխիր կալաքարային	1.10

Եւրոպացի բնապատումն Սբրուս գտած է կա-
թնածառ մի ակոնիթառի (aconit) ցեղէն. ա-
սոր կաթը շատ սպիտակ է և չաքարոտ: Հըն-
դիկները կը կտրեն ծառին կեղևը և երբ
կաթը կը ծորի, իսկոյն բերանին ճեղքին
վրայ դնելով կ'սկսին խմել մինչև լաւ մի յա-
գեհան և որչափ ալ խմեն բնաւ փնաս չըներ
վենեցուելայի կողմերը կը գտնուի ուրիշ